ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/102

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի քննելով Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ԻՆՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից 14.12.2020թ. ներկայացված (14.12.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/102 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«ԻՆՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ԻՆՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 14.12.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանը 17.11.2020 թվականին ժամը 11:04-ին հրապարակել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով գնանշման հայտարարությունը իր կարիքների համար

սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով:

Պատվիրատուի կողմից՝ իր կարիքների համար սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ գնումների պլանը՝ չհաստատված տարբերակով հրապարակվել է, Նոր-Նորք վարչական շրջանի վերաբերյալ մեկ տողով, որից ակնհայտ չէ, թե ընթացակարգի, որ չափաբաժնին է այն վերաբերվում:

Նոր-Նորք վարչական շրջանի վերաբերյալ գնումների պլանը (Երևանի քաղաքապետարանի 2021 թվականի փոփոխված գնումների պլան N 3), որում արդեն ներառված է Ընթացակարգի չափաբաժինները կրկին հրապարկվել է չհաստատված տարբերակով 17.11.2020 թվականին ժամը 18:06-ին: Բացի այդ հրապարակված գնումների պլանում առկա CPV կոդը չի համապատասխանում Ընթացակարգի չափաբաժինների CPV կոդին:

Ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից է ճանաչվել «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ:

Ընթացակարգի շրջանակում պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը հրապարկվել է 08.12.2020 թվականին և անգործության ժամկետը սահմանվել է 5 օր:

Բողոքի փաստական և իրավական հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկագիրը՝ սույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է:

Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (...):

Նշված իրավական նորմերի վերլուծությունից պետք է արձանագրել հետևյալը, որ գնման գործընթացի իրավական հիմքը Պատվիրատուի կողմից հաստատված և հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլանն է, որը կարող է հիմք հանդիսանալ գնման գործընթաց սկսելու, պատասխանատու ստորաբաժանում, գնումների համակարգող և հանձնաժողով ձևավորելու համար: Այլ կերպ ասած, եթե օրենսդրական կարգի պահպանմամբ հրապարակված չէ գնումների պլանը, ապա առկա չէ իրավական հիմքը և Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ և ոչ իրավաչափ է, ուստի ենթակա է չեղարկման:

Նշվածը իր հերթին համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, Պատվիրատուն գնումների պլանի փոփոխությունը, որում ներառված է Ընթացակարգի չափաբաժինները հրապարակել է 17.11.2020 թվականին ժամը 18:06-ին, այսինքն ավելի ուշ քան հրապարկված էր Ընթացակարգի վերաբերյալ գնանշման հարցման հրավերը: Օրենսդրի կողմից սահմանած այն իրավակարգավորումը, որ գնման գործընթաց սկեսլու իրավական հիմքը Պատվիրատուի կողմից հաստատված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանն է ինքնանպատակ չէ, այն ուղղված է կարգավորելու Պատվիրատուի գործողությունները գնման ընթացակարգի շրջանակում, այն օրենսդրական կարգին համապատասխան իրականացնելու և հետագայում իրավական խոչընդոտների

չբախվելու համար: Բացի այդ սույն դեպքում Պատվիրատուն գնումների պլանի փոփոխությունը, որում ներառված է Ընթացակարգի չափաբաժինները հրապարակել է հրավերի հրապարակումից հետո, սակայն նույնիսկ այդ դեպքում չի հրապարակել հաստատված տարբերակը, իսկ Օրենսդրի կողմից սահմանվել է հրապարկման ձևաչափը և ժամկետները, ըստ որի այն պետք է հաստատվի և երկու օրվա ընթացքում հրապարակվի տեղեկագրում, որից հետո նոր միայն հնարավոր է փաստել գնման ընթացակարգի իրավաչափությունը: Նշվածից զատ պետք է փաստել, որ Ընթացակարգի չափաբաժինների CPV կոդերը չեն համապատասխանում գնումների պլանում նշվածին, մասնավորապես գնումների պլանում նշված չեն դրանց հերթական համարները: Սույնով պայմանավորված պետք է փաստել, որ սույն գնման ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, Պատվիրատուի կողմից խախտելով առկա օրենսդրական կարգը, որը իր հերթին հետագայում կհանգեցնի գործարքի անվավերության, այն օրենքի խախտմամբ կնքված լինելու հիմքով:

Չնայած այն հանգամանքին, որ գնման Ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից է ճանաչվել «ԻՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ, սակայն գտնում ենք, որ կնքվելիք գործարքը լինելու է օրենքի խախտմամբ կնքված և իր մեջ պարունակելու է ռիսկեր և հանդիսանալու է անվավեր գործարք»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը հայտնել է, որ առաջնորդվելով վերոգրյալով և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով խնդրում է չեղարկել Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/19» գնման ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Երևանի քաղաքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 24.12.2020թ. թիվ 02/61-125053h գրությամբ տրամադրել է Երևանի

քաղաքապետարանի կողմից կազմակերպված ԵՔ-ԳՀԾՁԲ-21/19 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 25.12.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/102 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/102 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է ***17.11.2020թ.***:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***12.11.2020թ.***:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԻՆՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի 14.12.2020թ. ներկայացված բողոքը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա**

տեղեկատվության <u>հրապարակման նպատակով</u> <u>*www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է*</u>:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>գնումների պլանը</u>***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***<u>պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում</u>***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման <u>իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 15.12.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/18737-2020 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ խնդրելով տրամադրել Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ Երևանի քաղաքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 24.12.2020թ. թիվ 02/61-125053h գրությամբ տրամադրել է պահանջվող փաստաթուղթը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկագրում գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող

գնման առարկայի մասով հրապարակված գնումների պլանը և արձանագրում է, որ այն սահմանված կարգով հրապարակվել է ***12.11.2020թ.***, իսկ Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը ավելի ուշ՝ 17.11.2020թ.:

Այսպիսով՝ վերը նշված իրավակարգավորումները, համադրելով գործով առկա նյութերի հետ գտնում եմ, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները, այն է՝ առկա է «ԵՔ-ԳՀԾՁԲ-21/19» ծածկագրով գնման գործընթացը կազմակերպելու իրավական հիմքը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն դիտարկմանը, որ Պատվիրատուի կողմից հրապարակված գնումների պլանում առկա CPV կոդը չի համապատասխանում Ընթացակարգի չափաբաժինների CPV կոդին, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Պատվիրատուի կողմից ***12.11.2020թ.*** տեղեկագրում հրապարակված գնումների պլանի համաձայն՝ սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների համար միջանցիկ կոդը ըստ գնումների միասնական անվանացանկի (CPV) դասակարգման նախատեսվել է 92621110, որը համընկնում է Ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված, այն է՝ 92621110 CPV կոդին, հետևաբար գտնում եմ, որ բողոքաբերի դիտարկումը սույն մասով անհիմն է, իսկ ինչ վերաբերում է գնման առարկան գնումների պլանում մեկ տողով արտահայտելուն, որից ակնհայտ չէ, թե ընթացակարգի, որ չափաբաժնին է այն վերաբերում, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով, այն է՝ առանց ֆինանսական միջոցների նախատեսման և գնման առարկան գնումների պլանում ներառվել է առանց նախահաշվային գնի, հետևաբար գտնում եմ, որ գնման առարկաները մեկ ընդհանրական 92621110 ԳՄԱ կոդով նախատեսելը որևէ խոչընդոտ չի կարող հանդիսանալ և հանգեցնել Ընթացակարգին մասնակցելու իրավունքի իրացմանը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն մատնանշմանը, որ Պատվիրատուի կողմից գնումների պլանը հրապարակվել է չհաստատված տարբերակով, ապա սույն մասով գտնում եմ, որ որպես Օրենքով նախատեսված գնումների պլանի փոփոխությունների հաստատվելու պահանջ տվյալ դեպքում դիտարկվում է Պատվիրատուի կողմից ԳՊՊԿ (PPCM) համակարգ

նոր գնման առարկա մուտքագրել և հաստատելը, որը փոխկապակցված է ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգի հետ և առանց տվյալ ԳՄԱ կոդի Պատվիրատուի կողմից հաստատման «սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ» գնման առարկայի անվանմամբ Ընթացակարգ Armeps համակարգի միջոցով վերջինս չէր կարող կազմակերպել, իսկ տվյալ դեպքում կազմակերպված Ընթացակարգի ՄՀ աշխատանքային տարածքում որպես ԳՄԱ կոդ նշված է՝ 92621110-սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԻՆՎԵՆԹ ՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից 14.12.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**